ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻԿՏԻՄՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

Սեռական հանցագործությունները կարող են չկատարվել, եթե են-թադրյալ զոհը ցուցաբերի անհրաժեշտ շրջահայացություն և ճիշտ վարքագիծ դրսևորի կոնկրետ իրավիճակում պոտենցիալ ոտնձգություն կատարողի նկատմամբ: Ուստի հանցավոր վարքագծի մեխանիզմում պետք է առանձ-նացնել այն մարդկանց անձնական որակները, որոնք հետագայում դառնում են սեռական հանցագործության զոհ, հայտնաբերել և նրանց նկատմամբ ձեռնար-կել համապատասխան միջոցներ: Այս առումով սեռական հանցագործու-թյունների կանխարգելման բնագավառում անհրաժեշտ է առանձնահատուկ տեղ հատկացնել վիկտիմոլոգիային և վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկային:

«Վիկտիմոլոգիա» տերմինը ծագում է լատիներեն victima /զոհ/ և հունարեն logos /ուսմունք/ բառերից և նշանակում է ուսմունք զոհի մասին: Նեղ իմաստով վիկտիմոլոգիան հանդիսանում է կրիմինոլոգիայի բաղկացուցիչ մասը: Քրեական վիկտիմոլոգիան ուսումնասիրում է. ա/ տուժողների սոցիոլոգիական, հոգեբանական, իրավական, բարոյական և այլ բնութագրում-ները, ինչը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպիսի անձնական, սոցիալ-դերային և այլ պատճառների ուժով են նրանք դարձել հանցագործության զոհ,

բ/ տուժողների դերը հանցավոր վարքագծի մեխանիզմում և այն իրավիճակներում, որոնք նախորդել կամ ուղեկցել են հանցավոր վարքին,

գ/ հանցագործին և տուժողին կապող հարաբերությունները, ընդ որում և տևական, և կարճ ժամանակահատվածում ձևավորված, որոնք նախորդել են հանցավոր բռնությանը,

դ/ տուժողի վարքագիծը հանցագործության կատարումից հետո, ինչը կարևոր է ոչ միայն հանցագործությունների բացահայտման և հանցավորների պատժման, այլև նոր հանցագործությունների կանխարգելման համար[1]:

Որոշ հեղինակներ բացարձակ արդարացված կանխարգելման վիկտի-մոլոգիական ասպեկտը դիտում են որպես հետազոտությունների ուրույն կրիմինոլոգիական ուղղություն: Հանցագործությունների վիկտիմոլոգիական

[1] Малкина-Пых И.Г. Психология поведения жертвы.Справочник практического психолога. М., 2006.с.14.

պրոֆիլակտիկան սոցիալական հնստիտուտների յուրահատուկ գործունեությունն է, որն ուղղված է վիկտիմ վարքագծի ձևավորմանը նպաստող գործոնների, հանգամանքների, իրադրությունների հայտնաբերմանը, վերացմանը կամ չեզոքացմանը, ռիսկի խմբերի և վիկտիմության բարձր աստիճան ունեցող անձանց հայտնաբերմանը՝ նպատակ ունենալով վերականգնել կամ ակտիվացնել նրանց պաշտպանական հատկությունները, ինչպես նաև հանցագործություններից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պաշտպանության հատուկ միջոցների մշակմանը կամ կատարելագործմանը[2]: Ըստ Ռիվմանի, վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկան իրենից ներկայացնում է հանցավորության կանխարգելման սոցիալական համակարգի մեջ ներառված համասոցիալական և հատուկ կրիմինոլոգիական միջոցների ենթահամակարգ՝ ուղղված անհատական և զանգվածային վիկտիմության նվազեցմանը բացասական վիկտիմ նախահակվածության վերացման ճանապարհով, հանցագործությունների պոտենցիալ զոհերի պաշտպանական հնարավորությունների ակտիվացմանը և նրանց անվտանգության ապահովմանը[3]:

Հանցավոր վարքի ավանդական կանխարգելման նման վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկան ունի բարդ կառուցվածք, իրականացվում է տարբեր սուբյեկտների կողմից, տարբեր մակարդակներում, տարբեր տեսակներով ու ձևերով, տարբեր օբյեկտների նկատմամբ, վիկտիմ վարքի և անձնական որակների դրսևորման վաղ և անմիջական փուլերում:

Վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի սուբյեկտներ են հանդիսանում նույն պետական մարմինները, հասարակական և մասնավոր կազմակերպությունները, պաշտոնատար անձինք ու քաղաքացիները, որոնք իրականացնում են ավանդական կանխարգելում՝ այն տարբերությամբ, որ կարող են ստեղծվել, կազմավորվել, առանձնացվել հատուկ մասնագիտացված մարմիններ, ստորաբաժանումներ, խմբեր, հասարակական և մասնավոր կազմակերպություններ, որոնք պրոֆեսիոնալ ձևով կապահովեն հանցագործության զոհերի հետ աշխատանքը՝ նրանց հանցավոր ոտնձգություններից պաշտպանելու առումով[4]:

Սեռական հանցագործությունների վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկան կարելի է բաժանել 2 մասի. 1/ընդհանուր վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկա /հանցագործությունների կատարման պատճառներն ու պայմանները կապված տուժողի անձի և վարքի հետ/[5]: Տուժողի վարքը և քրեածին իրավիճակը սեռական հանցագործությունների վիկտիմոլոգիական համասո-

---

[2] Криминология. Под ред. В.Д.Малкова, М., 2006. с.187.
[3] Ривман Д.В. Криминальная виктимология. С.Пб., 2002. с.241.
[4] Криминология. Под ред. А.И.Долговой. М., 1997. с. 378.
[5] Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. С.Пб., 2007. с. 400.

ցիալական կանխարգելման փոխկապակցված և առաջատար գործոններն են: Հետազոտությունները ցույց են տվել, որ 14-21 տարեկան անձանց նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների 70%-ի դեպքում տուժողի վարքը կրել է ընդգծված վիկտիմ բնույթ[6]: Այս խմբին կարելի է դասել այն միջոցները, որոնք ուղղված են սեռական հանցագործության կատարմամբ հղի իրավիճակների վերացմանը ներառյալ.

1. ա/ հատուկ ծանուցումների պատրաստում և տարածում, որոնք կնախազգուշացնեն, թե ինչպես խուսափել հանցագործից և չդառնալ հանցագործության զոհ[7]: Մասնավորապես, սեռական հանցագործությունները հետազոտող բռնաբարության զոհ դարձած կանանց սթրեսը բուժող մասնագետները նախազգուշացնում են, որ կան իրավիճակներ ու մարդիկ, որոնցից պետք է խուսափել: Պետք է խուսափել մութ կայարաններից, այգիների չլուսավորված անցուղիներից, քայլել լավ լուսավորված տեղերով, իսկ մութ և վատ լուսավորված քաղամասերում քայլել փողոցի կենտրոնով, շրջանցել թփուտներն ու անցուղիները, անցնել փողոցի մյուս մայթ, եթե տեսնում եք կասկածելի անձ: Կան նշաններ, որոնցով կարելի է որոշել, թե ունակ է արդյոք տվյալ տղամարդը բռնաբարություն կատարել: Անհրաժեշտ է զգուշանալ այն տղամարդկանցից, որոնք կնոջը չեն դիտում որպես իրենց հավասար անձ կամ կանանց չեն համարում հուզական առումով իրենց հավասար: Անհրաժեշտ է կարդալ բռնաբարությունների մասին: Կան բաներ, որոնց իմացությունը կօգնի խուսափել բռնաբարությունից: Հետազոտությունները ցույց են տվել, որ տղամարդիկ և կանայք տարբեր կերպ են գնահատում սոցիալական հարաբերությունները. այն, ինչը կնոջ համար բռնություն է, տղամարդու համար նորմալ սեքս է, քանի որ նա հակված է տեսնել սեքսի առաջարկ այնտեղ, որտեղ կինն իր տեսանկյունից ոչ մի առիթ չի տվել: Տղամարդիկ այնպես են դաստիարակվում, որ զգում են իրենց գերազանցությունը[8]:

բ/ ՁԼՄ-ների միջոցով քաղաքացիներին տեղեկացնել կոնկրետ տարածքում հանցագործությունների կատարման փաստերի, հանցագործների տիպիկ գործողությունների մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչպես պետք է վարվել հանցագործի հետ հանդիպելու կամ քրեածին իրավիճակում գտնվելու պարագայում[9]: Այսպես, եթե որևէ մեքենա դանդաղ ընթանում է կնոջ կողքով, ապա վերջինս պետք է անցնի փողոցը և սկսի քայլել հակառակ ուղղությամբ: Եթե կինը պարզել է, որ իրեն հետապնդում են, պետք է փնտրի մարդաշատ կամ

---

[6] Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. С.Пб., 2007. с. 403.
[7] Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. С.Пб., 2007. с. 403.
[8] http//sex-extrim.ru/sex/izvrat/Kak-izbezhat-iznasilovanija/
[9] Криминология. Под ред. А.И.Долговой. М., 1997. с. 381.

լուսավոր վայր, ճիշտ հաշվարկի տարածությունը մինչև մոտակա հուսալի վայրը՝ համոզվելու, որ փախչելու դեպքում կհասնի այնտեղ ավելի արագ, քան իրեն կհասնի հանցագործը: Փախչել պետք է հնարավորինս արագ և հանկարծակի՝ ընթացքում գոռալով «հրդեհ», ինչը բնակիչների մոտ ավելի մեծ արձագանք կառաջացնի: Մնալով հանգիստ և պահպանելով ինքնատիրապետումը՝ կարելի է փորձել հոգեբանական ճնշում գործադրել ենթադրյալ հանցագործի վրա. ձևացնել հոգեկան խանգարում, ուշաթափություն կամ նշել իր մոտ վեներական հիվանդության առկայության մասին: Նման հնարքները փրկել են շատ կանանց: Միաժամանակ պետք է հիշել, որ թեթևամիտ վարքով կարելի է նպաստել բռնաբարությանը՝ կրելով կարճ զգեստ, ծանոթանալով հարբած տղամարդու հետ, մտնելով անծանոթ շրջապատ, օգտագործելով ալկոհոլ, թմրանյութեր[10]:

2. գ/ Նպատակաուղղված զրույցների անցկացում ծնողների, մանկական հիմնարկների աշխատողների, մանկավարժների, դպրոցականների, ուսումնական այլ հաստատությունների սովորողների հետ այն մասին, թե ինչպես պետք է վարվել հանցագործի կամ կասկածելի անձանց հետ հանդիպելիս[11]: Մեծահասակները, առաջին հերթին ծնողներն ու ուսուցիչները, պետք է իմանան, որ երեխայի սեռական շահագործումը մեծ և լուրջ խնդիր է: Երեխաներին պետք է նախազգուշացնել, որ մեծահասակների հետ որոշ շփումներից պետք է խուսափել: Դա պետք է անել նուրբ, իմիջիայլոց, չվախեցնելով երեխային և չառաջացնելով նրա մոտ հիվանդագին կասկածամտություն շրջապատող մարդկանց և սեփական սեքսուալության նկատմամբ:

Եթե երեխան ենթարկվել է սեռական ոտնձգության, ծնողներին խորհուրդ է տրվում. - պահպանել հանգստություն, քանի որ նրանց արձագանքից է կախված, թե երեխան ինչպես կընդունի և կվերապրի միջադեպը,

- ուշադիր վերաբերվել երեխայի խոսքերին՝ առանց դրանք անհավանական համարելու. անգամ եթե նման փաստեր չեն եղել, կարևոր է հասկանալ այդ ֆանտազիայի աղբյուրները. - պետք է խոսել երեխայի հետ, փորձել իմանալ կոնկրետ փաստեր, բայց առանց ճշտելու, պետք չէ բռնությամբ կորզել խոստովանությունը, անհրաժեշտ է ուշադիր լինել երեխայի կողմից կամովին ասվածին, - պետք է հանգստացնել երեխային, ցույց տալ, որ նրան սիրում են և ոչնչում չեն մեղադրում, ազատել ամոթի և մեղքի զգացումից, - լինել ազնիվ, ասել երեխային, թե ինչ են պատրաստվում անել և հարցնել, թե նա համաձայն է արդյոք նման մտադրությունների հետ /օրինակ, գնալ բժշկի կամ ոստիկանություն/, - աշխուժացնել նրան, չստիպել անել այն, ինչին նա պատրաստ չէ, և

---

[10] http//sex-extrim.ru/sex/izvrat/Kak-izbezhat-iznasilovanija/

[11] Криминология. Под ред. А.И.Долговой. М., 1997. с. 381-382.

օգնել նրան հնարավորինս շուտ վերականգնելու իր սովորական գործունեությունը, - վերջապես, դիմել մասնագիտական օգնության /հոգեբանական, իրավական, բժշկական/[12]:

Նշվածն էական է ոչ միայն երեխաների նկատմամբ կատարված սեռական հանցագործությունները բացահայտելու, այլև նրանց նկատմամբ նոր հանցագործությունները կանխարգելելու և վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի համար: Այս խմբին կարելի է դասել նաև հետևյալ միջոցառումները. փողոցների, փակուղիների, շենքերի մուտքերի, այգիների և հանցագործություն կատարելու համար նպաստավոր այլ վայրերի ստուգում և պատշաճ լուսավորության ապահովում, նախազգուշական գրությունների տարածում, նշված վայրերին մոտ ոստիկանության պահակետերի և վերակարգերի տեղակայում, քաղաքացիներին ֆիզիկական և տեխնիկական պաշտպանության հարցում գործնական օգնության ցուցաբերում բնակարան անցանկալի հյուրերի ներխուժման պարագայում և այլն[13]:

2/ Անհատական վիկտոմոլոգիական պրոֆիլակտիկա, որը բաղկացած է հետևյալ միջոցառումներից. ա/ զոհ դառնալու մեծ հավանականություն ունեցող անձանց հայտնաբերում անձնական ու վարքային առանձնահատկություններով[14]: Պրակտիկ գործունեության մեջ վիկտիմոլոգիական հնարավորությունների օգտագործումը կախված է նրանից, թե որքանով են լրիվ ու ժամանակին հայտնաբերվում պոտենցիալ տուժողները և կոնկրետ իրավիճակները, որոնք հղի են հանցագործության կատարման հավանականությամբ: Բարձր վիկտիմություն ունեցող անձանց հայտնաբերումը տարբերվում է՝ ելնելով նրանից, թե ինչպիսի /անհատական կամ խմբային/ նախատրամադրվածության մասին է խոսքը գնում: Բավականին հեշտ է այն անձանց հայտնաբերումը, որոնց վիկտիմությունը կապված է մասնագիտության, գործունեության բնույթի հետ /մատուցող, մարմնավաճառ և այլն/: Առավել բարդ է այն անձանց հայտնաբերումը, որոնց վիկտիմությունը պայմանավորված է նրանց վարքով: Պոտենցիալ տուժողների հայտնաբերման աշխատանքը չպետք է տարվի հանցանք կատարելու հակում ունեցող անձանց հայտնաբերման գործունեությունից անկախ: Հաճախ բարձր անհատական վիկտիմություն ունեցող անձինք ունեն հակասոցիալական դիրքորոշումներ, հանցավոր կապեր: Այդ պատճառով հանցանք կատարելու հակում ունեցող անձանց

---

[12] Кон И.С. Совращение детей и сексуальное насилие в междисциплинарной перспективе.//Педагогика, 1998. №5.
[13] Криминология. Под ред. А.И.Долговой. М., 1997. с. 381.
[14] Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. С.Пб., 2007. с. 400.

հայտնաբերելով՝ անհրաժեշտ է նրանց գնահատել հնարավոր վիկտիմիզացման տեսանկյունից: Նմանապես, ուսումնասիրելով կասկածյալի, մեղադրյալի, հանցագործություն կատարելու հակում ունեցողի անձը և բացահայտելով նրանց կապերը՝ կարելի է որոշել նրանցից տուժածների հնարավոր շրջանակը: Պոտենցիալ տուժողների հայտնաբերման նկատմամբ ավելի լայն մոտեցումը կապված է կոնկրետ հնարավոր իրավիճակների վերլուծության ու գնահատման հետ: Վերլուծելով կոնկրետ իրադրությունը՝ կարելի է հավասարապես որոշել և պոտենցիալ վնաս պատճառողներին /հանցագործներին/, և նրանցից պոտենցիալ տուժողների շրջանակը: Վերջապես, պոտենցիալ զոհերը կարող են հայտնաբերվել ուղղակիորեն իրավապահ մարմինների տեսադաշտում հայտնված անձանց սեռատարիքային, դեմոգրաֆիկ առանձնահատկությունների և բարոյահոգեբանական որակների գնահատման միջոցով: Վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի կազմակերպման համար պետք է ոչ միայն հայտնաբերել պոտենցիալ զոհին, այլև բացահայտել նրա ու հնարավոր վնաս պատճառողի միջև կապը տարբեր իրավիճակներում:

Կան մի շարք տիպիկ իրավիճակներ, որոնց համար կարելի է մշակել կանխարգելիչ գործողությունների ինքնատիպ ալգորիթմ և պոտենցիալ վնաս պատճառողի, և հնարավոր զոհի վերաբերությամբ: Նման իրավիճակների տարբերակները կարելի է ներկայացնել հետևյալ կարգով.

- հայտնի է կոնֆլիկտային իրավիճակ երկու կամ ավելի անձանց միջև, որում միանշանակ որոշված են հնարավոր վնաս պատճառողը և հնարավոր զոհը, ընդ որում, նրանց միջև դերափոխությունը բացառված է,
- հայտնի է նման կոնֆլիկտային իրավիճակ, բայց այստեղ մեծ է դերափոխության հավանականությունը «հանցագործ-զոհ» համակարգում,
- հայտնի են պոտենցիալ վնաս պատճառողը և իրավիճակները, որոնցում նա կարող է գործել, պարզ չէ հնարավոր զոհը,
- հայտնի են պոտենցիալ տուժողը և իրավիճակները, որոնցում նա իրեն որոշակի ձևով է պահում, հայտնի չէ հնարավոր վնաս պատճառողը,
- հայտնի են իրավիճակներ ակնհայտ վտանգավոր անձանց շատ թե քիչ լայն շրջանակի համար՝ պոտենցիալ վնաս պատճառող կամ հանցագործության զոհ դառնալու հավանականության տեսանկյունից[15]:

բ/ Այդ անձանց դաստիարակման, ուսուցման, անձնական անվտանգության ապահովում[16]: Անհատական ներգործության միջոցները կարելի է բաժանել երկու տեսակի՝ համոզման և օգնության միջոցների: Համոզման միջոցները կրում են և պաշտպանական, և դաստիարակչական բնույթ: Այդպի-

---

[15] Криминология. Под ред. А.И.Долговой. М., 1997. с. 379-380.
[16] Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. С.Пб., 2007. с. 401.

սիք են զրույցները, պարզաբանումներն այն մասին, թե ինչպես չդառնալ հանցագործության զոհ, ինչպես ապահովել սեփական առողջության պահպանումը: Օգնության միջոցներին առաջնահերթ դասվում են հատուկ խորհրդատվական կետերի, հանցագործություններից քաղաքացիների սոցիալ-հոգեբանական պաշտպանական կենտրոնների կազմակերպումը, որոնց հիմնական խնդիրն է հանցագործություններից պաշտպանվելու միջոցների մասին բնակչության տեղեկացումը: Նշված միավորումներում պետք է կազմակերպել հանցագործությունների պոտենցիալ զոհերի խմբային և անհատական խորհրդատվություններ, որոնց ընթացքում ցույց կտրվի սոցիալ-հոգեբանական օգնություն, կկանխատեսվի նրանց անհատական վիկտիմ վարքը, կհայտնաբերվեն և համատեղ ուժերով փորձեր կարվեն չեզոքացնել նրանց անձի վիկտիմոլոգիական էական գծերը և վարքի առանձնահատկությունները[17]:

Ինչ վերաբերում է նշված անձանց անվտանգության ապահովման միջոցներին, ապա դրանք կարելի է ստորակարգել երկու խմբի.

- միջոցներ, որոնք կիրառվում են այն դեպքերում, երբ այլ ձևերով տվյալ անձի համար վտանգավոր իրավիճակը որևէ պատճառով վերացնել հնարավոր չի եղել /անհատական պաշտպանական միջոցների տրամադրում և այլն/,
- միջոցներ, որոնցով պետք է ներգործել պոտենցիալ զոհի վրա՝ նրա ներքին պաշտպանական հնարավորությունները վերականգնելու կամ ակտիվացնելու նպատակով /ինքնապաշտպանական հնարքների ուսուցում և այլն/[18]:

Դեռահասների ու անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի մեջ առաջնահերթ դեր է խաղում վիկտիմոլոգիական և սեռական դաստիարակությունը:

Վիկտիմոլոգիական դաստիարակությունն ուղղված է հավանական զոհի մոտ ինքնապահպանության տեսական և գործնական հիմքերի ձևավորմանը, արտակարգ իրավիճակները հասկանալու և դրանցից խուսափելու որոշ հմտությունների զարգացմանը, իր համար նվազագույն վնասով ստեղծված իրադրությունից դուրս գալու մեթոդների ձևավորմանը: Անհրաժեշտ է նկատել, որ 4-5 տարեկան երեխաներին մատչելի են պարզ և ուսուցանող խաղեր, որոնք նրանց մոտ ձևավորում են օտար անձանց զգույշ վերաբերվելու ունակություններ, արտասովոր իրավիճակներին ուշադրություն դարձնելու հմտություններ և այլն[19]: Սեռական դաստիարակությունը գործընթաց է՝ ուղղված անձնական այնպիսի որակների, հատկությունների մշակմանը, որոնք

---

[17] Криминология. Под ред. В.Д.Малкова. М., 2006. с. 193.

[18] Криминология. Под ред. А.И.Долговой. М., 1997. с. 382.

[19] Волкова Т. Виктимологическая профилактика. Требуется обучение правилам безопасного поведения. //Российская юстиция. 2003. №1. с. 69.

թույլ են տալիս իրականացնել սեփական սեռական նույնացումը և մշակել մարդու անհրաժեշտ վարքագիծը մյուս սեռի ներկայացուցիչների հետ հարաբերություններում կենսագործունեության բոլոր փուլերում: Այն ներառում է կանանց և տղամարդկանց միջև որոշակի հայացքների, սովորությունների, ճաշակի քարոզումը, որոնք կապված են տվյալ հայացքների հետ և հաշվի են առնում անհատական առանձնահատկությունները[20]: Երեխայի սեռական զարգացման առանձնահատկությունները պետք է դիտել որպես սեռական դաստիարակության կառուցման հիմքերից մեկը: Ինչպես ցանկացած մանկավարժական գործընթացի, այնպես էլ սեռական դաստիարակության մեջ պետք է առանձնացնել խրախուսող /խթանող/ և արգելող /կանխարգելիչ/ բնույթի պահեր[21]: Երեխաներին պատժելով կամ փաղաքշելով՝ շատ մեծահասակներ չեն գիտակցում, որ իրենք այդ ընթացքում ունենում են սեռական զգացողություններ և նման զգացողություններ առաջացնում են երեխաների մոտ: Երեխային կարելի է և պետք է կպչել, համբուրել, փաղաքշել, բայց հնարավորինս խուսափել էրոգեն գոտիներից: Սակայն նման զգացողությունները հատուկ առաջացնել և դրանք ֆիքսել իր կամ որևէ առանձնահատուկ իրավիճակների վրա չի կարելի: Երեխայի հուզական և սեռական արծագանքներին ուշադիր վերաբերվելով՝ պետք է հարգել նրա իրավունքը վերահսկելու սեփական մարմինը՝ խուսափելով այն ամենից, ինչը նրան թվում է տհաճ կամ նվաստացուցիչ[22]: Կանխարգելման նպատակով կարելի է նախազգուշացնել սեռական զարգացման որոշ դրսևորումների վաղաժամկետ գիտակցումը երեխայի կողմից: Մեծահասակների վարքը չպետք է երեխայի ուշադրությունը հրավիրի սեռական խնդիրներին, հետաբար, նրանք պետք է իմանան, թե ինչն է երեխայի սեռական զարգացման մեջ նորմալ և ինչն է դուրս նորմայի սահմաններից: Երեխան չպետք է վաղաժամ տեղեկատվություն ստանա սեռական հարցերով: Իսկ դրա համար պետք է իմանալ, թե ինչպիսի տեղեկատվությունը որ տարիքում կլինի օգտակար[23]:

Դաստիարակչական բնույթի միջոցները կանխարգելիչ աշխատանքի մի մասն են: Միջանձնային փոխհարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը,որը

---

[20] Резер Т.М. Медико-социальные подходы к организации полового воспитания и сексуального образования // Социологические исследования. 2003. № 1. с. 104.

[21] Колесов Д.В., Сельверова Н.Б. Физиолого-педагогические аспекты полового созревания. М., 1978. с. 169.

[22] Кон И.С. Совращение детей и сексуальное насилие в междисциплинарной перспективе.// Педагогика, 1998. №5.

[23] Колесов Д.В., Сельверова Н.Б. Физиолого-педагогические аспекты полового созревания. М., 1978. с. 169.

կարող է մտնել կենսագործունեության անվտանգության համակրթական ծրագրերի մեջ, աշխատանքի ավելի հեռանկարային ուղղություն և արդյունավետ մեթոդ է: Ուրիշների սխալների վրա սովորելը, ինքնապաշտպանության ունակությունը, ժամանակակից ռիսկային հասարակության մեջ ապրելու հոգեբանական հմտությունների մշակումը հետագա միջոցների հեռանկարն է[24]:

Սեռական հանցագործությունների վիկտիմոլոգիական ասպեկտը թույլ է տալիս անցկացնել սեռական հանցագործությունների լատենտայնության բարձր աստիճանի վերլուծություն, քանի որ հանցավորության կանխարգելումը պետք է իրականացվի ոչ միայն գրանցված կամ բացահայտված հանցագործությունների ուղղությամբ, որը սառցաբեկորի միայն գագաթն է, այլև առաջնահերթ ուղղված լինի լատենտայնության դեմ: Լատենտայնությունը հիմնականում դրսևորվում է կատարվածի մասին իրավապահ մարմիններին հանցագործությունից տուժողների չհայտնելով[25]: Այս երևույթի պատճառները կարող են բազմազան լինել, մասնավորապես, տուժողները գտնում են, որ հանցագործությունը բավականին լուրջ չէ, որ դրա մասին հայտնեն, ենթադրում են, որ իրավապահ մարմինները հաջողություն չեն ունենա ապացույցների անբավարարության պատճառով, հայտարարություն տալու հետ կապված ծախքերը նրանց կարող են թվալ անհամադրելի դրանից ստացվող շահի հետ, զոհը կարող է վախենալ հանցագործի վրեժից[26], ինչպես նաև քաղաքացիների ցածր իրավագիտակցությունը, թերահավատությունը իրավապահ մարմինների նկատմամբ, հանցագործին ինքնադատաստանի ձևով պատժելու ձգտումը և այլն: Սեռական հանցագործությունների կտրվածքով պետք է ընդգծել մի շարք առանձնահատուկ պատճառներ. սեռական հանցագործությունները շոշափում են ինտիմ բնույթի հարցեր, որոնք տուժողը, որպես կանոն, չի ուզում հրապարակել, տուժող կարող են լինել դեռահասները և անօգնական վիճակում գտնվող անձինք, տուժողը կարող է կախման մեջ լինել հանցագործից, գտնվել փակ հիմնարկում: Վերոհիշյալ առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն սեռական հանցագործությունների վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի միջոցառումների ժամանակ[27]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ պետք է նշել, որ վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի կոնկրետ միջոցների ընտրությունը կախված է սեռական հանցագործության տեսակից, կատարման տեղից, ժամանակից, եղանակից և այլ գործոններից:

---

[24] Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. С.Пб., 2007. с. 403.
[25] Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. С.Пб., 2007. с. 402.
[26] Боков А.В. Организация борьбы с преступностью.М.,2003. с. 81.
[27] Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. С.Пб., 2007. с. 402.